1. Ճանաչել Անուշ Հովսեփի Արամյանին սեփականության իրավունքը Նոր Հաճըն համայնքում, Գետամեջ գյուղի, 21-րդ փողոցի, թիվ 8 հասցեում գտնվող 07-025-0102-0006 կադաստրային ծածկագրով, 0.1 հա տնամերձ հողամասը (հիմք՝ քաղվածք հողային բարեփոխումներ և սեփականաշնորհման հանձնաժողովի 20.04.1992 թվականի թիվ 3 որոշմամբ) և դրանից ավել օգտագործվող մինչև 20 տոկոս 0.00292 հա հողամասի նկատմամբ /ընդամենը՝ 0.10292 հա/, քանի որ դա չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամաս, ինչպես նաև համայնքի հողերի օգտագործման սխեմայով կամ գլխավոր հատակագծով տվյալ հողակտորը նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, հողօգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը, հողամասը չի ընդգրկված ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, որի օրինականցման դեպքում նախատեսված վճարներ չեն գանձվում:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՆՈՐ ՀԱՃՐՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՐՆ, ՏՈՌՈՂՁՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08-ը նոյեմբերի 2023թ. N 2193
Նոր Հաճրն

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման պահանջներով՝ **որոշում եմ**.

Մանվել Խորենի Ստեփանյանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքին տալ հետևյալ հասցեն՝

-Կոտայքի մարզ, Նոր Հաճրն համայնք, գյուղ Արգել, 23-րդ փողոց, թիվ 2/1 հասցե:

Համայնքի ղեկավար՝



Գ. Մաթևոսյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՆՈՐ ՀԱՃՐՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 նոյեմբերի 2023 թվականի N 2194

2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՆՈՐ ՀԱՃՐՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱԲԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի, Նոր Հաճրն համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 15-ի N 124-Ա և 26 հոկտեմբերի 2023 թվականի N 100_Ա որոշումների, Նոր Հաճրն համայնքի ղեկավարի 2022 թվականի սեպտեմբերի 29-ի N 147 կարգադրության և հիմք ընդունելով Նոր Հաճրն համայնքում տեղական վճարների դրույքաչափի նվազեցման արտոնություն կիրառելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի 2023 թվականի նոյեմբերի 07-ի ուսումնասիրության ակտը, **որոշում եմ.**

1. Նոր Հաճրն համայնքում 2023 թվականի տեղական վճարների դրույքաչափի նվազեցման արտոնություններ կիրառել՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՆՈՐ ՀԱՃՐՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃՐՆ, ՏՈՒՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ


08 նոյեմբերի 2023 թ. N 2195

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջներով՝ որոշում եմ.

1. Ձևակերպել կառուցապատող Հունան Համլետի Բաբայանի կողմից իրականացված Նոր Հաճրն համայնքի Հարավարևելյան թաղամաս 2-րդ փողոց թիվ 11 հասցեում գտնվող բնակելի տան և պարիսպի կառուցման ավարտական ակտը (շահագործման թույլտվություն կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝



Գ. Մաթևոսյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՆՈՐ ՀԱՃՐՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՐՆ, ՏՈՌՈՂՁԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50, Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 նոյեմբերի 2023 թվականի N 2196

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և 48-րդ հոդվածի, Նոր Հաճրն համայնքի ավագանու 2022թ. փետրվարի 18-ի <<Նոր Հաճրն համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը հաստատելու մասին>> N21-Ա որոշման պահանջներով, հաշվի առնելով Նոր Հաճրն քաղաքի Թումանյանի փողոցի 5-րդ շենքի 434-րդ բնակարանի բնակիչ Արմեն Բեկյանի դիմումը և հիմք ընդունելով համայնքապետարանի սոցիալական հարցերի հանձնաժողովի եզրակացությունը՝ **որոշում եմ.**

1. Համայնքի 2023 թվականի բյուջեի գործառնական դասակարգման 10.7.1. <<Սոցիալական հատուկ արտոնություններ>> հատվածի ծախսերի տնտեսագիտական դասակարգման 4726 <<Հուղարկավորության նպաստներ բյուջեից>> հոդվածից 70000 (յոթանասուն հազար) դրամի չափով դրամական օգնություն տրամադրել համայնքի բնակիչ Արմեն Բեկյանին, հոր՝ Շամշադ Բեկյանի թաղման ծախսերը հոգալու համար:
2. Հանձնարարել համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական և գնումների կազմակերպման բաժնի պետ Ա. Բադալյանին՝ ապահովելու ֆինանսավորումը:
3. Սույն որոշումը ուժի մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար

Գ. Մաթևոսյան

08.11.2023թ.
ք. Նոր Հաճրն





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՆՈՐ ՀԱՃՐՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃՐՆ, ՏՈՒՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08-ը նոյեմբերի 2023թ. N 2197


ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգով **որոշում եմ**.

1. Մանե Տիգրանի Ղևոնդյանին, Լիանա Բորիկի Ալիսանյանին և Տիգրան Արևշատի Ղևոնդյանին տալ բնակելի տան և պարիսպի կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Նոր Հաճրն համայնքի գյուղ Նոր Գեղի Ա. Խանջյան փողոց թիվ 21/4 հողամասում: (շինարարության թույլտվությունը կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝



Գ. Մաթևոսյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 2198

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՈԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի՝ որոշում եմ.

1. Նոր Հաճրն համայնքի Նոր Գեղի գյուղում գտնվող Լիլիթ Սուրիկի
Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքին /
կադաստրային ծածկագիր 07-046-0103-0016/ տրամադրել հասցե ըստ բաժանման
սխեմայի.

1.1 Առանձնացվող հատված 1- 0.02838հա- ՀՀ, Կոտայքի մարզ, Նոր Հաճրն
համայնք, գյուղ Նոր Գեղի, Ա. Խանջյան փողոց, 27/1 հողամաս

1.2 Առանձնացվող հատված 2- 0.02811հա- ՀՀ, Կոտայքի մարզ, Նոր Հաճրն
համայնք, գյուղ Նոր Գեղի, Ա. Խանջյան փողոց, 27 հողամաս

1.3 Առանձնացվող հատված 3- 0.02851հա- ՀՀ, Կոտայքի մարզ, Նոր Հաճրն
համայնք, գյուղ Նոր Գեղի, Ա. Խանջյան փողոց, 27/2 հողամաս

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Համայնքի ղեկավար՝



ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃԸՆ, ՏՈՌՈՂՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 նոյեմբերի 2023 թ. N 2199

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջներով՝ որոշում եմ.

1. Ձևակերպել կառուցապատող Տիգրան Գառնիկի Կիրակոսյանի, Կարինե Սերյոժայի Գրիգորյանի, Տարոն Տիգրանի Կիրակոսյանի, Տաթևիկ Տիգրանի Կիրակոսյանի կողմից իրականացված Նոր Հաճըն համայնքի Հարավարևելյան թաղամաս 2-րդ փողոց թիվ 11 հասցեում գտնվող բնակելի տան վերակառուցման և քարե պարիսպի կառուցման ավարտական ակտը (շահագործման թույլտվություն կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝



Գ. Մաթևոսյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 2200

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՄԱՐԻԱՄ ԼՅԱԶԳՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՆՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Նոր Հաճրն համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 15-ի N 122-Ն որոշման N 2 հավելվածը, անհատ ձեռնարկատեր «Մարիամ Լյազգյանի» ներկայացրած հայտը և N 3278 վճարման անդորրագիրը՝ **որոշում եմ**.

1. Տալ թույլտվություն անհատ ձեռնարկատեր Մարիամ Լյազգյանին (պետական հաշվառման համար՝ 80.1235794) Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնքի Նոր Գեղի գյուղի Բաղրամյան փ. 1-ին փկղ. թիվ 1 հասցեում գտնվող, 82 քառակուսի մետր առևտրային մակերեսով հիմնական շինության ներսում 2023 թվականի 4-րդ եռամսյակի ընթացքում իրականացնելու.

1) ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք.

2) ծխախոտային արտադրատեսակների վաճառք:

2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ՝ Խ. Թարվերդյանի վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝

ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

09 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023

ք. Նոր Հաճրն





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 2201

ԱՆՀԱՏ ԶԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՍՈՍ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ԱՅԼ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, հիմք ընդունելով Նոր Հաճրն համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 15-ի N 122-Ն որոշման N 1 հավելվածը, անհատ ձեռնարկատեր «Սոս Ավետիսյանի» ներկայացրած հայտը և N 13502 վճարման անդորրագիրը՝ որոշում եմ.

1. Տալ թույլտվություն անհատ ձեռնարկատեր «Սոս Ավետիսյանին» (պետական հաշվառման համար՝ 80.928690) Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնքի Շահումյան 2/16 հասցեում գտնվող, 0.9 քառակուսի մետր մակերեսով տարածքի վրա 2023 թվականի հոկտեմբերի 1-ից դեկտեմբերի 31-ը այլ արտաքին գովազդ տեղադրելու համար:
2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ՝ Խ. Թարվերդյանի վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար

ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

09 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023
ք. Նոր Հաճրն





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 2202

ԱՆՀԱՏ ԶԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՊԱՎԵԼ ԲԱՂԴԱՍԱՐՈՎԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՆՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Նոր Հաճրն համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 15-ի N 122-Ն որոշման N 2 հավելվածը, անհատ ձեռնարկատեր «Պավել Բաղդասարովի» ներկայացրած հայտը և N 13518 վճարման անդորրագիրը՝ **որոշում եմ**.

1. Տալ թույլտվություն անհատ ձեռնարկատեր «Պավել Բաղդասարովին» (պետական հաշվառման համար՝ 80.947863) Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնքի Նոր Գեղի գյուղի Ֆ.Թևոսյան Փ. 233 հասցեում գտնվող 35,2 քառակուսի մետր առևտրային մակերեսով հիմնական շինության ներսում 2023 թվականի 4-րդ եռամսյակի ընթացքում իրականացնելու.

1) ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք.

2) ծխախոտային արտադրատեսակների վաճառք:

2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ՝ Խ. Թարվերդյանի վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝

ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

09 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023

ք.Նոր Հաճրն





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 2203

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՌԷԴ ԻՆՎԵՍՏ ԳՐՈՒՊ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆՆ ԱՅԼ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, հիմք ընդունելով Նոր Հաճրն համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 15-ի N 122-Ն որոշման N 1 հավելվածը, «ՌԷԴ ԻՆՎԵՍՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը և N 231108048990000 վճարման հանձնարարականը՝ որոշում եմ.

1.Տալ թույլտվություն «ՌԷԴ ԻՆՎԵՍՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին (պետական հաշվառման համար՝ № 290.110.944580) Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնքի Աշոտ Հարությունյան 1 հասցեում 2023 թվականի նոյեմբերի 1-ից մինչև նոյեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում այլ արտաքին գովազդ տեղադրելու համար՝ 18քմ:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ՝ Խ. Թարվերդյանի վրա:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝

ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

09 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023
ք.Նոր Հաճրն





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Նոր Հաճըն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 2204

«ՆՈՐ ԳԱԶ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, հիմք ընդունելով Նոր Հաճըն համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 15-ի N 122-Ն որոշման N 1 հավելվածի 4-րդ կետը, «ՆՈՐ ԳԱԶ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացրած հայտը և N 863893076 վճարման հանձնարարականը՝ **որոշում եմ**.

1. Տալ թույլտվություն «ՆՈՐ ԳԱԶ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (պետական հաշվառման համար՝ 80.110.1330352), Նոր Հաճըն համայնքի Պարզեվաշեն 4-րդ թաղամաս 22 հասցեում գործող հեղուկ վառելիքի և հեղուկացված նավթային գազերի վաճառքի կետում 2023 թվականի Նոյեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում իրականացնելու հեղուկ վառելիքի վաճառք:

2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի առևտրի, սպասարկման, գովազդի, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ՝ Խ. Թարվերդյանի վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝

ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

09 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023
ք. Նոր Հաճըն





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃԸՆ, ՏՈՌՈՂՁՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թ. N 2205

Նոր Հաճըն

ՓՈՓՈԽՎԱԾ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի <<Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին >> N 596-Ն որոշման պահանջներով՝ **որոշում եմ**.

1. Հաստատել՝ Ղուկաս Առաքելյան Անուշավանի, Սիլվա Առաքելյան Արամայիսի, Արմեն Առաքելյան Ղուկասի, Աստղիկ Առաքելյան Ղուկասի և Անի Ղուկասի Առաքելյան կողմից ներկայացրած՝ Նոր Հաճըն համայնք, գյուղ Նոր Գեղի Ե. Քոչարի փողոց թիվ 11 հասցեի, 2022 թվականի հունիսի 02-ին թիվ 98 շինարարության թույլտվությամբ տրված, նախագծի փոփոխությունը (փոփոխված նախագիծը կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝



Գ. Մաթևոսյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճըն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 2206

«ՆՈՐ ԳԱՋ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ ՆԱՎԹԱՅԻՆ ԳԱԶԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, հիմք ընդունելով Նոր Հաճըն համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 15-ի N 122-Ն որոշման N 1 հավելվածի 4.2-րդ կետը, «ՆՈՐ ԳԱՋ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացրած հայտը և N 618209083 վճարման հանձնարարականը՝ **որոշում եմ**։

1.Տալ թույլտվություն «ՆՈՐ ԳԱՋ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (պետական հաշվառման համար՝ 80.110.1330352), Նոր Հաճըն համայնքի Պարզևաշեն 4-րդ թաղամաս 22 հասցեում գործող հեղուկ վառելիքի և հեղուկացված նավթային գազերի վաճառքի կետում 2023 թվականի նոյեմբերի 1-ից դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում իրականացնելու հեղուկացված նավթային գազերի վաճառք։

2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի առևտրի, սպասարկման, գովազդի, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ՝ Խ. Թարվերդյանի վրա։

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից։

Համայնքի ղեկավար՝

ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

09 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023

ք.Նոր Հաճըն





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճըն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 2207

«ՆՈՐ ԳԱՋ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԺԱՄԸ 24:00-ԻՑ ՀԵՏՈ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, հիմք ընդունելով Նոր Հաճըն համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 15-ի N 122-Ն որոշման N 1 հավելվածը, «ՆՈՐ ԳԱՋ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացրած հայտը և N 319952371 վճարման հանձնարարականը՝ **որոշում եմ**.

1.«ՆՈՐ ԳԱՋ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (պետական հաշվառման համար՝ 80.110.1330352) տալ 2023 թվականի նոյեմբերի 1-ից դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում Նոր Հաճըն համայնքի Պարզևաշեն 4-րդ թաղամաս 22 հասցեում գործող հեղուկ վառելիքի և հեղուկացված նավթային գազերի վաճառքի կետում ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվություն:

2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի առևտրի, սպասարկման, գովազդի, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ՝ Խ. Թարվերդյանի վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝

ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

09 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023

ք.Նոր Հաճըն





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճըն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 2208

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի՝ որոշում եմ.

1. Նոր Հաճըն համայնքի Նոր Արտամետ գյուղում գտնվող Մարիետտա Մամիկոնի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքին /հիմք ժառանգության վկայագիր N 642-20230530-84-6969467/ տրամադրել հասցե.

-ՀՀ, Կոտայքի մարզ, Նոր Հաճըն գյուղ Նոր Արտամետ, 10-րդ փողոց, 34 բնակելի տուն:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Համայնքի ղեկավար՝



ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃԸՆ, ՏՈՌՈՂՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09-ը նոյեմբերի 2023թ. N 2209

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգով **որոշում եմ**.

1. Էդգար Անդրեյի Սարգսյանին տալ բնակելի տան կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Նոր Հաճըն համայնքի գյուղ Նոր Գեղի Ա. Խանջյան փողոց թիվ 69 հողամասում: (շինարարության թույլտվությունը կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝



Գ. Մաթևոսյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 2210

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՀԱՅԿ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՆՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Նոր Հաճրն համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 15-ի N 122-Ն որոշման N 2 հավելվածը, անհատ ձեռնարկատեր «Հայկ Մարգարյանի» ներկայացրած հայտը և N 13519 վճարման անդորրագիրը՝ **որոշում եմ**.

1. Տալ թույլտվություն անհատ ձեռնարկատեր Հայկ Մարգարյանին (պետական հաշվառման համար՝ 80.1026905) Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնքի Նոր Գեղի գյուղի Առողջարանային փ. թիվ 16, հասցեում գտնվող 40 քառակուսի մետր առևտրային մակերեսով հիմնական շինության ներսում 2023 թվականի 4-րդ եռամսյակի ընթացքում իրականացնելու:

1) ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք:

2) ծխախոտային արտադրատեսակների վաճառք:

2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ՝ Խ. Թարվերդյանի վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝

ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

09 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023

ք.Նոր Հաճրն





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 2211

ԱՆՀԱՏ ԶԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՐԵՓՆԱԶ ԷԴԻԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՆՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Նոր Հաճրն համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 15-ի N 122-Ն որոշման N 2 հավելվածը, անհատ ձեռնարկատեր «Արեգնազ Գրիգորյան»-ի ներկայացրած հայտը և N 13558 վճարման անդորրագրերը՝ որոշում եմ.

1.Տալ թույլտվություն անհատ ձեռնարկատեր «Արեգնազ Շահբազյան»-ին (պետական հաշվառման համար՝ 80.1328509) Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնքի 2. Անդրանիկի 7 հասցեում գտնվող 45 քառակուսի մետր առևտրային մակերեսով հիմնական շինության ներսում 2023 թվականի 4-րդ եռամսյակի ընթացքում իրականացնելու.

1) ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառք.

2.Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ՝ Խ. Թարվերդյանի վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝

ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

09 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023

ք.Նոր Հաճրն





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՆՈՐ ՀԱՃՐՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՐՆ, ՏՈՌՈՂՁՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 նոյեմբերի 2023 թվականի N 2212

ՆՈՐ ՀԱՃՐՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱՆԵՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՎ ՍԱՐԳԻՍ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏԱՏԻԿԻ ԵՎ ՊԱՊԻԿԻ ՀԵՏ ՇՓՄԱՆ ԱՐԳԵԼՔԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՊԱՀԱՆՋԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն <Տեղական ինքնակառավարման մասին> օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Ընտանեկան օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի <<Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի N 164-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 9-րդ կետի 25-րդ ենթակետի, հիմք ընդունելով Նոր Հաճրն համայնքի Նոր Գեղի բնակավայրի Մոնթե Մելքոնյան փողոցի թիվ 1 տան բնակիչներ Հովհաննես և Ալվարդ Բաղդասարյանների դիմումը /մուտք՝ 2424 23.10.2023թ./, հաշվի առնելով Նոր Հաճրնի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2023 թվականի նոյեմբերի 2-ի թիվ 08 նիստի արձանագրությունը, **որոշում եմ.**

1. Պարտավորեցնել Արփինե Արտակի Հղաթյանին չխոչընդոտել իր անչափահաս երեխաներ՝ Հովհաննես /ծնված՝ 21.01.2017թ./ և Սարգիս /ծնված՝ 19.01.2018թ./ Պարգևի Բաղդասարյանների հետ պապիկի և տատիկի՝ Հովհաննես և Ալվարդ Բաղդասարյանների հետ շփմանը:
2. Սահմանել տեսակցության կարգ՝ շաբաթական 2 օր, յուրաքանչյուր շաբաթվա շաբաթ և կիրակի օրերը՝ ժամը 14-00-ից մինչև 20-00-ն, երեխաների մոր՝ Արփինե Արտակի Հղաթյանի ներկայությամբ, բայց ոչ նրա ներկայիս բնակության հասցեում /Նոր Գեղի, Ֆրոնտիկ Թևոսյան փողոց, 56/13 /:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արփինե Արտակի Հղաթյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Ք.Նոր Հաճրն
09.11.2023թ.





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃԸՆ, ՏՈՌՈՂՁՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 նոյեմբերի 2023 թ. N 2213
Նոր Հաճըն

ՓՈՓՈԽՎԱԾ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի <<Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին >> N 596-Ն որոշման պահանջներով՝ **որոշում եմ**.

- Հաստատել՝ Դավիթ Միերի Մելիքյանի կողմից ներկայացրած՝ Նոր Հաճըն համայնք, գյուղ Գետամեջ 3րդ փողոց 3-րդ փակուղի թիվ 13/1 հասցեի, 2022 թվականի հոկտեմբերի 26-ին թիվ 225 շինարարության թույլտվությամբ տրված, նախագծի փոփոխությունը (փոփոխված նախագիծը կցվում է):
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝



Գ. Մաթևոսյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃԸՆ, ՏՈՒՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09-ը նոյեմբերի 2023 թ. N 2214
Նոր Հաճըն

**ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՐՎԱԾ 01 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ
ԹԻՎ 2157 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Նորմատիվ իրավական ակտերի մասին օրենքի 34-րդ հոդվածի պահանջներով՝
որոշում եմ.

1. Նոր Հաճըն համայնքի ղեկավարի կողմից տրված 2023 թվականի նոյեմբերի 01-ի N 2157 որոշման մեջ նշված «արդյունաբերական օբյեկտների» բառերը փոխարինել «ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասերի» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար



Գ. Մաթևոսյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 2215

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՅԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2 387-Ն որոշմամբ հաստատված կարգի՝ որոշում եմ.

1. ՀՀ Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնքի Նոր Գեղի գյուղի վարչական տարածքում գտնվող Արմինե Լուսիկ Ստեփանյանին պատկանող, համաձայն ժառանգության իրավունքի պայմանագրի /նոտարական ակտի կոդ 793-20231012-84-7377802/ հողամասին տրամադրել հասցե.

-ՀՀ, Կոտայքի մարզ, Նոր Հաճրն համայնք, գյուղ Նոր Գեղի, Ֆ. Մկրտչյան փողոց, թիվ 3 հողամաս:

2.Դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ հասցեի գրանցում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



Համայնքի ղեկավար

ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճըն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 2216

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2 387-Ն որոշմամբ հաստատված կարգի՝ որոշում եմ.

1. Նոր Հաճըն համայնքի Մրգաշեն գյուղում գտնվող Անուշ Հմայակի Խաչատրյանին և նրա ընտանիքին համատեղ սեփականության իրավունքով պատկանող 07-046-0038-0005 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0.11352հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասին տալ հետևյալ հասցեն՝

-ՀՀ, Կոտայքի մարզ, Նոր Հաճըն համայնք, գյուղ Մրգաշեն, 13-րդ փողոց թիվ 23 հողամաս:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՆՈՐ ՀԱՃՐՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃՐՆ, ՏՈՒՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10-ը նոյեմբերի 2023թ. N 2217

Նոր Հաճրն

ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության 2019թ նոյեմբերի 19-ի N 225-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 04-ի N 1023-Ն որոշմամբ, հաշվի առնելով, որ ինքնակամ իրականացված շինությունները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ **որոշում եմ.**

1. Գառնիկ Ռաֆիկի Գեղամյանին սեփականության իրավունքով պատկանող / հիմք՝ 03092021-07-0050 վկայական / Նոր Հաճրն համայնքի, Քարաշամբ գյուղի, Ամառանոցային թաղամասի, 11-րդ փողոցի թիվ 1 հասցեի, 07-066-0101-0055 կադաստրային ծածկագրի տակ գտնվող ինքնակամ իրականացված 142.1 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը, 23.47 քառակուսի մետր մակերեսով ծածկոցները, 10.26 քառակուսի մետր մակերեսով հենապատը և 5.62 քառակուսի մետր մակերեսով քարե պարիսպը համարել օրինական/ հաշվառման ծածկագիր՝ 2023E6PQY9/:
2. Գառնիկ Ռաֆիկի Գեղամյանը պարտավոր է ինքնակամ իրականացրած 180.55 քառակուսի մետր մակերեսով շինությունների օրինականացման համար սույն որոշման ընդունման օրվանից վաթսույն օրվա ընթացքում Նոր Հաճրնի համայնքապետարանի 900115102221 հաշվեհամարին մուծել 234361 (երկու հարյուր երեսսունչորս հազար երեք հարյուր վաթսունմեկ) դրամ, հակառակ դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:
3. Սույն որոշումն ուժի մեջ է իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝

Գ. Մարտոսյան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՆՈՐ ՀԱՃՐՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՐՆ, ՏՈՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10-ը նոյեմբերի 2023 թ. N 2218

Նոր Հաճրն

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ
ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն և 912-Ն որոշումների, **որոշում եմ՝**

1. Նոր Հաճրն համայնքի, գյուղ Նոր Գեղի, Ֆ. Թևոսյան փողոցի, թիվ 108/8 հասցեում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող 0.00182 հա բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակությամբ հողամասում ինքնակամ կառուցված 10.2 քառակուսի մետր արտաքին մակերեսով խանութը համարել Նոր Հաճրն համայնքի սեփականություն և ճանաչել օրինական (Հաշվառման ծածկագիր՝ 2023AGXEY):

2) Ընդունել ի գիտություն, որ՝

1) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

3) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Հաստատել սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված շինության և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի հատակագծերը :

4. Սույն որոշումը սահմանված կարգով ենթակա է գրանցման ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:

5. Սույն որոշումից ծագող իրավունքի պետական գրանցման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն անել ինքնակամ կառույցը իրականացրած Սվետլանա Ռուբենի Պետրոսյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված կառույցը և համապատասխան հողամասի գնման նպատակապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) տրամադրելու մասին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝

Գ.Մաթևոսյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՆՈՐ ՀԱՃՐՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ՆՈՐ ՀԱՃՐՆ, ՏՈՌՈՂՁԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ


10 նոյեմբերի 2023 թ. N 2219

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջներով՝ որոշում եմ.

1. Ձևակերպել կառուցապատող Հայկ Սամվելի Բարսեղյանի կողմից իրականացված Նոր Հաճրն համայնքի գյուղ Նոր Գեղի Երևանյան փողոց թիվ 108/2 հասցեում գտնվող ավտոտնակի կառուցման ավարտական ակտը (շահագործման թույլտվություն կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝



Գ. Մաթևոսյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՆՈՐ ՀԱՃՐՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2412 ք. ՆՈՐ ՀԱՃՐՆ, ՏՈՒՌՈՋՅԱՆ 7
(0-224) 4-27-70, 4-25-50 Fax (0-224) 4-27-70
E-mail: nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10-ը նոյեմբերի 2023 թ. N 2220
Նոր Հաճրն

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության 2019թ. նոյեմբերի 19-ի N 225-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020թ. հունիսի 04-ի N 1023-Ն որոշման և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006թ. մայիսի 18-ի N 912-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով սեփականատեր Լևոն Մելիքյանի դիմումը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, չեն կառուցված ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն կառուցված քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Լևոն Անդրիասի Մելիքյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնքի Քանաքեռական գյուղի 7-րդ փողոց 2-րդ նրբանցք 8 հասցեում գտնվող՝ 07-064-0013-0001 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի վրա ինքնակամ կառուցված արտաքին չափերով 66,13 քմ ամառային խոհանոցը, 13,17 քմ մառանը և 13,67 քմ պարիսպը ճանաչել օրինական (Չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր 2023AHLXHH) և որպես օրինականացման վճար սահմանել (վճարման հաշվեհամար 900115102221)՝

ամառային խոհանոցի համար 66,13 քմ x 1182 դրամ = 78170 դրամ /յոթանասունութ հազար մեկ հարյուր յոթանասուն/ դրամ:

մառանի համար 13,17 քմ x 1182 դրամ = 15570 դրամ /տասնհինգ հազար հինգ հարյուր յոթանասուն/ դրամ:

պարիսպի համար 13,67 քմ x 1182 դրամ = 16160 դրամ / տասնվեց հազար մեկ հարյուր վաթսուն/ դրամ:

Ընդհանուր օրինականացման վճար դրամ 109900 դրամ / մեկ հարյուր ինը հազար ինը հարյուր/ դրամ:
2. Շինությունների օրինականացման համար սահմանված վճարը 60 օրվա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

3. Սույն որոշումն ուժի մեջ է իրազեկելուն հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝



Գ.Մաթևոսյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Նոր Հաճըն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 նոյեմբերի 2023թվականի N 2221

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 2019թվականի նոյեմբերի 19-ի N225-Ն Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 04-ի N 1023-Ն որոշման՝ հիմք ընդունելով սեփականատիրոջ դիմումը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինքնակամ կառուցած շինությունը կառուցված է ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրա պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ **որոշում եմ.**

1. **Վանիչկա Ավագի Չոբանյանին և Ասյա Վաղինակի Չոբանյանին** համատեղ սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքում Հարավարևելյան թաղամասի 6-րդ փողոցի 2 հասցեում գտնվող 07-006-0056-0001 ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում 100,92քմ արտաքին մակերեսով ինքնակամ կառուցված բնակելի տունը, 4,6քմ արտաքին մակերեսով ինքնակամ կառուցված խորդանոցը համարել օրինական (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ հաշվառում 2023NY3RZ8):

2. Վանիչկա Ավագի Չոբանյանը և Ասյա Վաղինակի Չոբանյանը պարտավոր են սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման համար սույն որոշման ընդունման օրվանից վաթսույն օրվա ընթացքում Նոր Հաճընի համայնքապետարանի **900115102221** հաշվեհամարին վճարել **244390 /երկու հարյուր քառասունչորս հազար երեք հարյուր իննսուն/ դրամ**, հակառակ դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

3. Սույն որոշումն ուժի մեջ է իրագնելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճրն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճրն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 2222

ԱՆՀԱՏ ԶԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԶԱՆԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱՆՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

